անապատանայ յայրմանէ հրոյ, որ ի գլուղն կայր հան-
դէպ ծառին: Զայրումն ծառիս և զհատանումն վար-
դապետք մեր պատմեցին, որք ականատես էին այսմ:

Մարտի Լ[1]) Լուսաւորչի կիրակէի եկն Աստուա-
ծատուր վարդապետն Խաչատուր վարդապետին և
այլ ամենայն միաբանօք ի Կաֆայոյ, յորում աւուր
Ծաղկազարդ էր ազգին Ֆռանկաց, որ զօրինակ Նըս-
տելոյն Քրիստոսի յաւանակի արարին. զի նախ եր-
թեալ մեծաւորն ի Բեթանիայ[2]) և ածին զյաւանակն առ
նայ, և հեծեալ անդ ի վերայ նորա իջանէր ի Լեռնէն
Ձիթենեաց, և յանցս ճանապարհին յամենայն ազգաց՝
Յունաց և Հայոց, Տաճկաց և ի Հրէից և յայլասեռից,
արանց և կանանց, ծերոց և տղայոց՝ նստէին արտա-
քոյ քաղաքին առ ի տեսութիւն. և գայր մտանէր յա-
ւանակաւ ի քաղաքն Երուսաղէմ ի դրանէ Սուրբ Փըրկ-
չին և Սիոնին, և որ առաջի և զկնի երթային յա-
շակերտաց նորա և ի ժողովրդոց, զՈվսաննան կար-
դային և այլք զհանդերձս տարածանէին ի ճանա-
պարհին և ոմանք ոստս ի ծառոց հատանէին և մա-
տուցանէին նմա. և գայր առաջի դրանէն Սուրբ Յա-
կոբայ անցանէր և երթայր ի վանս իւր: Եւ փաշայ
քաղաքին ոչ շատ հեռագոյն երթայր յետոյ զկնի նո-
րա, զի ի բազմաց ելելոցն ի տեսութիւն նորին մի
լիցի կռիւ և աղմուկ: Ի միւսում ամի Աբդռահիմն
մուհտի, որ ետ ֆեթվայ սպանման թագաւորին, ման-
զուլ արարին և ետուն զԵրուսաղէմ նմա ի դատաւո-
րութիւն. սայ ոչ թողոյր, արգելոյր զնստիլն յաւա-
նակի Ֆռանկաց այն աւուր իւրեանց Ծաղկազարդի:
Եւ յայնմ հետէ խափանեցաւ այն օրէնն, որ առնէին
ի քաղաքն Երուսաղէմ: Եւ յետ ամաց ինչ այլ փա-
շայ և ղատի ասացին նոցա առնել. ոչ կամեցան Ֆը-

1) ԼԱ. 2) Բեդանիայ.